

Նպատակ 15: Անտառների կայուն կառավարում, անապատացման դեմ պայքար, հողերի դեգրադացման դադարեցում և շրջադարձում, կենսաբազմազանության կորստի կասեցում

Անտառները կազմում են Երկրի մակերեսի 30%-ը և պարենով ու ապաստանով ապահովելուց բացի, առանցքային նշանակություն ունեն կլիմայի փոփոխության դեմ պայքարի առումով՝ պահպանելով կենսաբազմազանությունը և տեղաբնիկների բնակավայրերը: Ամեն տարի 13 մլն հա անտառ ոչնչանում է, իսկ չորային շրջանների աննահանջ դեգրադացումը հանգեցրել է 3,6 մլրդ հա տարածքի անապատացման:

Անտառահատումը և անապատացումը, որոնք առաջանում են մարդու գործունեության և կլիմայի փոփոխության պատճառով, լուրջ մարտահրավեր են կայուն զարգացման համար և աղբատության դեմ պայքարում անդրադարձել են միլիոնավոր մարդկանց կյանքի ու կենսամիջոցների վրա: Ջանքեր են գործադրվում անտառների կառավարման և անապատացման դեմ պայքարի ուղղությամբ:

ԻՆՉՈ՞Ւ Է ԱՅՆ ԿԱՐԵՎՈՐ

Շուրջ 1,6 մլրդ մարդկանց կենսամիջոցները կախված են անտառներից:

Ո՞րն է նպատակը

Ապահովել անտառների կայուն կառավարումը, պայքարել անապատացման դեմ, դադարեցնել և շրջադարձել հողերի վատթարացումը, կասեցնել կենսաբազմազանության կորուստը:

Ինչո՞ւ

Անտառները կազմում են մոլորակի ցամաքի մոտ 31%-ը: Մտածե՛ք այդ մասին: Մոտ 1,6 մլրդ մարդու կենսամիջոցները կախված են անտառներից: Հողերի վատթարացումն անմիջականորեն ազդում է աշխարհի աղբատ բնակչության մոտ 75%-ի վրա: Գիտե՞ք, որ անտառները տուն են բոլոր ցամաքային կենդանիների, բույսերի, միջատների ավելի քան 80%-ի համար: Կենդանիների 8300 հայտնի ցեղատեսակներից 8%-ը ոչնչացած է, իսկ 22%-ը ենթակա է ոչնչացման վտանգի:

Կենսաբազմազանությունը և էկոհամակարգային ծառայությունները նույնպես կարող են հիմք ծառայել կլիմայի փոփոխության հարմարվողականության և աղետների վտանգի նվազեցման ռազմավարությունների համար, քանի որ դրանք կարող են այնպիսի օգուտներ ապահովել, որոնք կմեծացնեն կլիմայի փոփոխության նկատմամբ մարդկանց դիմակայունությունը:

Անտառները և բնությունը կարևոր են նաև հանգստի ու հոգեկան բարեկեցության համար: Շատ մշակույթներում բնական լանդշաֆտները սերտորեն կապված են հոգևոր արժեքների, կրոնական համոզմունքների և ավանդական ուսուցման հետ:

Ի՞նչ կարծենա խնդրի լուծումը

ՄԱԿ-ի Անտառների վերաբերյալ ֆորումի քարտուղարության հաշվարկներով՝ անտառների կայուն կառավարման հասնելու համար միջազգային հանրությունը ամեն տարի պետք է ծախսի 70-160 մլրդ ԱՄՆ դոլար: Ըստ Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի՝ մինչ 21-րդ դարի կեսերը կենսաբազմազանության կորուստը միջազգային մակարդակով կասեցնելու համար տարեկան անհրաժեշտ է 150-440 մլրդ ԱՄՆ դոլար:

Ի՞նչ կարծենա մեզ համար խնդրի չլուծված լինելը

Կենսաբազմազանությունն ապահովում է բազմաթիվ ծառայություններ՝ տեղականից մինչև համընդհանուր, իսկ կենսաբազմազանության կորուստն ամենատարբեր հետևանքներ ունի՝ հուզականից մինչև գործնական: Օրինակ՝ միջատներն ու այլ վարակակիրները սննդամթերքի համաշխարհային արդյունաբերության համար արժենում են ավելի քան 200 մլրդ ԱՄՆ դոլար: Համաշխարհային բարձրակարգ դեղերի 3/4-ը պարունակում է այնպիսի բաղադրիչներ, որոնք ստացվում են ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի մզվածքներից: Բնական աղետները, որոնց պատճառը մարդու գործունեության և կլիմայի փոփոխության հետևանքով վնասված էկոհամակարգն է, արդեն իսկ ամբողջ աշխարհի համար տարեկան արժենում են ավելի քան 300 մլրդ ԱՄՆ դոլար: Անտառահատումը և անտառների դեգրադացումը հանգեցնում են բոլոր տեսակների բնական միջավայրի կորստին, քաղցրահամ ջրի որակի նվազեցման, հողի էրոզիայի ծավալման, հողերի վատթարացման և դեպի մթնոլորտ մեծ քանակությամբ ածխածնի արտանետման: Կարճ ասած, անտառների պահպանմանն ուղղված գործողությունների բացակայությունն ազդեցություն է գործում և՛ մոլորակի, և՛ մեր համայնքների առողջության վրա:

Ի՞նչ կարող ենք անել

Անխուսափելիորեն՝ մենք փոխում ենք էկոհամակարգը, որի մասն ենք կազմում մեր գոյությամբ, սակայն մենք կարող ենք կատարել այնպիսի ընտրություններ, որոնք կա՛մ հաստատում են բազմազանությունը, կա՛մ արժեզրկում են այն: Օրինակ՝ կարող ենք նպաստել վերաօգտագործմանը, տեղական ծագման սննդամթերքի օգտագործմանը, սպառել միայն այն, ինչ իսկապես անհրաժեշտ է և սահմանափակել էներգիայի օգտագործումը՝ շեռուցման ու հովացման արդյունավետ համակարգերի միջոցով:

Մենք պետք է նաև հարգալից լինենք վայրի բնության նկատմամբ և մասնակցենք Էկոտուրիզմի միայն այնպիսի հնարավորություններին, որոնք իրականացվում են խելամտորեն ու բարոյական բարձր չափանիշներով, որպեսզի որևէ կերպ չվնասվի վայրի բնությունը:

Պատշաճ կառավարվող պահպանվող տարածքներն աջակցում են առողջ Էկոհամակարգերին, որոնք, իրենց հերթին, առողջ են պահում մարդկանց: Յետևաբար, չափազանց կարևոր է ապահովել տեղական համայնքների ներգրավումն այդ պահպանվող տարածքների զարգացման և կառավարման գործում:

Կայուն զարգացման նպատակների և 15-րդ նպատակի մասին առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ հղումով`

<http://www.un.org/sustainabledevelopment>